

ԵՍՏՕՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

Զ. ԲԱԼՈՒԴԵԱՆՑԻ

Երբ որ Աստուած ստեղծեց աշխարհ—
Երնչաւորին, անշընչին—
Նա բաժանեց պէս-պէս բարբառ,
Միտք յալտնելու ամենքին:
Բայց այդ լեզուք արտայալտել
Չէին կարող «Երկնալինն»...
Տէրն էր նոցա նըշտնակել
Մեր առօրեայ պէտքերին:
Չը գիտէին ստեղծւածները
Մի ձև, մի դարձ ձայներից,
Որ կարենար զգացումները
Պատշաճ յալտնել սըրտերից:
Ալդ պահանջը էր հոգեկան
Մի պէտք, բարձըր միւսներից...
Եւ կենդանիք հաւաքւեցան
Խընդրել այդ «բանն» Արարչից:
Դա մի դաշտ էր, դաշտ լայնարձակ
Եղեմական բոլոսերով,
Ուր ժողովւեցան և մարդ, սոխակ,
Զեռուն, գազան խումբերով:
Եւ բոլորը խոնարհեցին,
Որ աղօթեն առ Աստուած...
Նոքա այդ «բանն» անւանեցին

«Թարգման սըրտին վըշտացած»:
 Յանկարծ օդում հընչեց մի ձայն,
 Օտարօտի մի աղմուկ...
 Ակորդները թըռան, սլացան...
 Տիրեց ճընշող մի անձուկ...
 Հանդիսականք լուռ ու լալկան
 Ապշած իրար նայեցին.
 Նոքա երբէք նըման մի ձայն
 Զէին լըսել ոչոքից:
 Դա երգերի սուրբ հընշտակն էր,
 Որ իջնում էր երկընքից...
 Ամբողջովին նա փալլում էր
 Իր լուսեղէն շըրջանից:
 Ամպի սպիտակ քուլաները
 Պատել էին անմահին՝
 Տանջւած կուրծքը դէմ անելով
 Թշնամու նետին կարկտահար:
 Յանկարծ երգը լըռեց, դադրեց
 Մի խոր, անհուն, մութ ձորում...
 Մարեց... չը կալ... կարծես, խեղդւեց
 Չորի խոնաւ լատակում...
 Բայց ոչ. ահա էլ լըսեցին
 Դիւթիչ երգի ակկորդներ...
 Սակայն մեղմիկ, հանդիսատ հընչեց
 Նա իր վերջին այդ տողեր:
 Զէին բուռն, առաջւալ պէս
 Այդ հընչիւններն, թըրչելով...
 Նոքա դաշտի մի գետի պէս
 Հոսում էին անվըրդով:
 Զէին նոքա այլ նմանում
 Կրակոտ, վառւած պատանուն...
 Հանդարտ էին, առանց գոռում,
 Նըման եփւոծ ծերունուն...
 Ջմալլում էին բնութեան շուքով,

Տէրին սաղմոս երգելով...
 Կընդրուկ ծըխում, խոնարհւելով,
 ծըշմարտութեան անունով:
 Գեղեցկութեան սուրբ սեղանին
 Դափնիք էին զոհ բերում...
 Սիրոյ սերմը ցանում էին
 Իրանց մշակած արտերում...
 Եւ այդ վերջին հանգարտ տողեր
 Բուրում էին վսեմ զգացմամբ...
 Կարծես, թէ սիրտն սըրբւած լինէր
 Խելքի սառը քըննութեամբ...
 Քաղցըր մի նինջ էր տարածւել
 Լըսողաց մէջ այդ դաշտին...
 Նոքա չէին դեռ ըսթափւել
 Դիւթիչ երգի օրօրից:
 «Սա երազ է»—հարցնում էին
 Լուռ, աչքերով միմեանց,
 Երբ մեղեդին ոգու վերջին
 Հանգաւ դողդոջ մէջ լերանց...
 Երկար բոլորն, մընջւած ալսպէս,
 Նայում էին սմալերին.
 Եւ նա ոսկէ իր թևերը
 Տարածել էր չորս կողմին:
 Եւ լըսում էր ողջ ըընութիւն
 Քաղցրահընչիւն հրեշտակին...
 Անսովոր մի անդորրութիւն
 Պատեց, կարծես, ամենքին...
 Լուռ էր անտառ, լուռ էր գետին
 Եւ լեռնալին առուներ...
 Լուռ էր ծովը այն ահագին
 Եւ մարդ, սողուն, թըռչուններ...:
 Զարածլնի արձագանքը
 Միմոսութիւնն իր թողեց...
 Եւ ծառերի խիտ արանքը

Մըտաւ ու լուռ պլազրգեց:
 Խսկ նա ձայնը իր երկնալին.
 Հազար ու մի տեսակով
 Սըլացնում էր յանկարծ ուժգին
 Կամ քընքըշացնում մեղմ տօնով:
 Չեռքում ունէր երեքլարեան
 Փըղոսկըրեալ մի քընար...
 Նա խրփում էր մատով վերան,
 Չայներ հանում անդադար....
 Եւ ալդ երգը ոլորտում էր,
 Յանկարծ ողբում, հեկեկում...
 Սըրտաճըմլիկ թըլպըլտում էր,
 Կարծես, կողպած վանդակում....
 Նա յուսահատ կամ անցնում էր,
 Կարծես, մէկին փընտռելով...
 Խըռպոտ ձայնով մերթ կանչում էր
 Կորած եարին վայվույով:
 Ամբողջ կեանքը բազմակողման
 Պատկերներով խառնիխուռն
 Նըկարւած էր մէջը կենդան
 Զգացմունքներով մեղմ ու բուռն:
 Եւ մանուկը, երիտասարդ,
 Եւ ալեզարդ ծերունին
 Իրանց հայեացք, սիրտ, միտք ու դարդ
 Նընչել էին այդ երգին:
 Երբեմն ձայնը ուրախ, զըւարթ
 Թըրուչկոտելով, խալտալով
 Դիմում էր դէպ' հեռւի այն վարդ,
 Որ բուրում էր քաղցր հոտով:
 Եւ ալդ երգին ականջ դնելով,
 Կը տեսնէիք մանուկին,
 Որ, թիթեռին հետևելով,
 Քըշում էր իր փայտէ ձին....
 Նորա կալտառ լըւլըւոցը

Որ դարձրած էր թիժեռին,
 Հանում կըրծքից խոր հոգւոցը—
 Զեր նոյն մատաղ հասակին:
 Դուք զմալլում էք, ուրախանում,
 Անմեղ մանկան նալելով,
 Երբ խընդում է, զըւարճանում
 Թիժեռնիկին փախցնելով:
 Ահա, կարծես, երդը լուզւեց...
 Հեռու, հեռու սըլացաւ...
 Որոտալից մի «ախ» լըսւեց,
 Լի ցաւերով բիւր, անբաւ:
 Եւ ալդ նօտան բարձրանում էր
 Բուռըն զգացմամբ սաւառնում...
 Եւ նա քիչ քիչ խըլանում էր,
 Աստեղց, լուսնի աշխարհում:
 Կարծես, թէ նա բողոքում էր,
 Անբաւական նեղ կեանքից,
 «Ազատ նդ... նդ... ազատ հովեց
 «Եւ մահ անխիղճ ոսոխինա....
 Նա ձըգտում է իդէալին,
 Կարմիր գոյնով նըկարած...
 Նա դիմում է ալդ փարոսին
 Ճամբով դըժւար-փուշ բուսած....
 Եւ հրապուրած, բոլոր ոյժը
 Լարած, ջարդեց կապանքներ...
 Նա չէ կորցրել գեռ իր լոյսը...
 Դեռ չեն սառել երակներ....
 Իսկ թըշնամիք բիւր են թըւով,
 Խանգարում են, չեն թողնում
 Եւ նա վառւած սիրոյ տենդով,
 Իր վէրքերը չէ տեսնում:
 Հըսկալական մեծ քալերով
 Նա վազում է շընչասպառ,
 Ուր նա ծածկւեց ընդ միշտ, կարծես,

Կախարդելով ողջ բնութիւն... :

* * *

Այնուհետև ամեն մի բոլու,
Ամեն մի թոյլ արարած
Երգել ըսկսեց, երբ մէջ անլոյս
Դրութեան կը լինէր ընկճւած....
Ալդ երկնալին սուրբ պարգևեց
Վերցրին ամենք մի ջոկ ճիւղ...
Հողմը մըտքում շատ պինդ պահեց
Նրա գոռոցը աներկիւդ...
Յըստակ աղբըին խիստ գուր եկաւ
Երգի ուրախ կարկաջիւնն...
Տերեւախիտ կաղնին առաւ
Ոգու շորի մեղմ շըշիւնն...
Բուն յօրինեց մի սըրտառուչ
Ողբ առ անբաղդ իր վիճակն...
Սոխակն սըրբեց փոքրիկ կընդուզ,
Որ ըսկըսէ դալլալիկն....
Միայն ձուկը չէր ալն դաշտում
Ոգու երգած ըստէին...
Խեղճը զըրկւեց, մընաց ջըրում,
Որ չը խեղդւէ մէջ օդին:
Խսկ մարդկային խորունկ սիրտը
Լըքցւեց աամբօղջ ալդ երգով...
Նա ալժմ էլ է երբեմն դարդը
Երգում՝ ոգուն նմանելով....

Օգեստ. 1 յունաշեն, 1889 թ.

